

Նոյեմբերի 15-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

07/11/12թ. «Բանանց»-«Շիրակ» խաղին «Բանանց» թիմի ֆուտբոլիստ Արտաշես Առաքելյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում 2-րդ դեպք) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

11/11/12թ. «Գանձասար»-«Արարատ» խաղին «Արարատ» թիմի գլխավոր մարզիչ Արթուր Խաչատրյանի հեռացման, մրցավարին հայհոյելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ որակազրկել մինչև 31.12.2012թ., «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 150000 դրամ:

11/11/12թ. «Գանձասար»-«Արարատ» խաղին «Արարատ» թիմի մարզիչ Արմեն Տոնոյանի խաղադաշտ մտնելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

12/11/12թ. «Շիրակ-2»-«Միկա-2» խաղը «Շիրակ-2» թիմի կողմից 10-15 րոպե ուշացումով տեսագրելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 10000 դրամ:

12/11/12թ. «Շիրակ-2»-«Միկա-2» խաղը «Միկա-2» թիմի կողմից չտեսագրելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ «Միկա» ֆուտբոլային ակումբին տուգանել 30000 դրամ:

07/11/12թ. «Միկա-96»-«Բերդ-96» խաղի նախախաղային խորհրդակցությանը «Բերդ-96» թիմի ներկայացուցչի ուշանալու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ Բերդավանի գյուղապետարանին տուգանել 2000 դրամ:

07/11/12թ. «Միկա-96»-«Բերդ-96» խաղի նախախաղային խորհրդակցությանը ուստիկանության ներկայացուցչի չմասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ «Միկա» ֆուտբոլային ակումբին տուգանել 10000 դրամ:

11/11/12թ. «Իմպուլս-2-97»-«Իջևան-97» խաղին «Իմպուլս-2-97» թիմի մարզիչ Հայկազ Վիրաբյանի հեռացման, մրցակցի ակումբի նախագահին հայհոյելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Էրեբունի-Դիլիջան» մարզական ակումբին տուգանել 20000 դրամ:

08/11/12թ. «Գանձասար-95»-«Շիրակ-95» խաղին «Գանձասար-95» թիմի կազմում որակազրկված ֆուտբոլիստ Հովհիկ Ավանեսյանի մասնակցելու համար, ՀՖՖ-ի

կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ «Գանձասար-95» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «Գանձասար» ֆուտբոլային ակումբին տուգանել 40000 դրամ:

14Բ085 խաղին «Աչաջուր-99» թիմի կազմում չգրանցված ֆուտբոլիստ մասնակցելու համար, ՀՖՖ-ի մանկապատանեկան մրցումների անցկացման կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Աչաջուր» ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 դրամ: